

ԱՐԴՈՒ ՀԱՅԱՍՏԱՆ

Հ Ա Ն Դ Ե Ս

ՔՐՈՅՑԿԱՆ, ԲԵՐԿԱՆ, ԲԵՇԱՍՏԻՐԵԿԱՆ ԵՒ ԿՈԵՒՏՐԵԿԱՆ

ԳԻՅԱԼԵՐԸ

ՇՐՋԱՆ ՎԵՑԱՄՍ ԵԱՅ

Շ Ա Ր Ե Գ Ի Ր Ք

Դ Պ . Պ . Պ Ա Ր Թ Ւ Զ Պ Ա Ն Ե Ա Ն .

Ա . Տ Ա Ր Ի . Ա . Շ Ր Ջ Ա Ն

1862

Թ Ի Ւ Ի . Փ Ե Տ Ր Վ Ա Ր 5

Հրատարակի ամփաց երկու շանգամ .

Վեցամսեայ գինն է 8 դրանգ .

Խջմիքն գուրս ձամբու ծախըց տոնոցին ջրայ է .

Ստորագրութիւններց շրջանին սկիզբեն կցախին .

Հ ա մ դ ե ս ի ս վերաբերեազդ եւ իցէ նամակ եւ գրաթիւն և նօրենին դիտի ու ցցուի .

Ստորագրութեան տեղերն են .

Խջմիք՝ Պատղութական թանգարանց Նոցչիոցց , թիւ . 25

եւ Ճացիկի գրասենեացց , Կիլիլ խոն , թիւ . 5 :

Յ Ա Ռ Ե Ջ Ա Բ Ե Ն

Ազգի մը մէջ օր աւուր բարեհապատակ ընկերութեանց և մանաւանդ Գրական հանդէսներու աշխը , նոյն լողին դէպ 'ի յառաջադիմութիւն և լուսաւորութիւն ունեցած փափաքը կիմացընէ : Յայտնի ճշմարտութիւն մի է որ յողավրդեան մի լուսաւորութեան մէջ զարգանալուն դլխաւոր և մեծ պատճառներէն են պարբերական հանդէսները : Ուրախ ենք տեսնելով՝ որ մեր ազգին մէջ ալ այս տեսակ թերթերը երթալով շատնալու վրայ են (երանի' թէ յարատե ընթացք մը ունենային) :

Հսոնց միջոցաւ հասարակութիւնը գիտութեան, ուսման , բարոյականութեան և բարեկրթութեան լոյնածառալ ասպարէցը խոյանալով՝ իւր հետաքըրք քրութիւնը յադեցնելը ետքը՝ իւր գատողութիւնն ու դաղափարները կը շտկէ , տրամաբանել կը սովորի

և իւր բարքն ու բնաւորութիւնը ուղիղ ձամբու մէջ կը դնէ :

Մեծի գովիեստից և երախտազիտութեան արժանի են արգարե բոլոր հայրենասէր խմբագիրք , որոնք աղջասիրական ողւով կը չանան միշտ զԱզր արթնյընելով՝ զայն լուսաւորութեան և բարեկրթութեան ցանկալի պողոտայն առաջնորդելու :

Մենք ալ , ըստ մեր կարողութեան , այս անձնանուէր անձանց ազգասիրական ողւոյն մասնակից ըլլալ փափաքելով , սոյն այս ԳԵՐՈՒՆԻ ՀԵՅՅԱ-ՏԵՐԻ անուն կիսամսեայ հանդէսը կը նուիրեմք խոնարհաբար մեր սիրելի լողին ընթերցասիրացը :

Ինչպէս որ յայտնած ենք արդէն մեր Յայտարարութեան մէջ , այս հանդէսը Բարոյական , Բնական , Բնանասիրական և Առաւտրական զիտելիքներ պիտի պարունակէ , պիտի ջանայ միշտ ամենուն հաճելի և օդտակար ըլլալ և ամեն մոռքերու հպելի

ընել իւր մէջը բովանդակուած նիւթերը :

Բարյական ճանը, որ մարդուս հողին կրթելու և քնաւորութիւնը աշնուացընելու կը նպաստէ, պիտի բովանդակէ այլ և այլ խորհրդածութիւններ, դաստիարակութեան, բարոյականութեան, քաղաքակրթութեան, քաղաքավարութեան վրայ դրութիւններ, օգատակար խրանքներ, խելացի ասացուածներ, բարոյական առակներ, առածներ և այլն :

Բանիանը, որ ամեն աեսակ մարդու թէ զուարձալի և թէ նպաստաւորէ, պիտի խօսի բնական պատմութեան և բնագիտութեան վրայ, որոնց մէջ կը բովանդակին կենդանեաց և բուսոց բնութիւնը, երկրիս կաղմութիւնն ու իր մէջը գտնուած նիւթերը, բնաբանական, բնալուծական և աստղաբաշխական զիտելիքներ :

Բանասիրականին տակ պիտի գտնուին ազգային նախնի և արդի սովորութիւններ, չետաքբրական, պատմական և աշխարհագրական տեղեկութիւններ, այլ և այլ տեղերու սառագրութիւններ, երեկի ճամբորդութիւններ, ազգերու և ցեղերու սովորութիւններ ու բարքեր, բանաստեղծութիւններ, զանազան վիապանութիւններ, ընտիր թատրերդութիւններ, և երեմն մասնաւոր երեկի անձանց պատմութիւններ :

Արևարական ճանը պիտի պարունակէ զանազան դրամներու գիներ, փոխանակազրերու արժողութիւններ, Խզիր թէ ծովէ և թէ ցամաքէ մըտած ապրանաց որքանութիւնը, եկած նաւերը, շոգենաւերը, ուրկէ գալերնին, բերած ապրանքնին, միկոնող նաւերը, մւր երթալինին և տարած ապրանքները : Խըրտպիոյ մեծ ու վաճառաշահ քաղաքներէ Զմիւռնիա զալիք վաճառականական նաւերը՝ իրենց անունով և պարունակութեամբը, նմանապէս Տաճկաստանէն Վնդղիա գացած դլիւսոր ապրանքներուն այն տեղ ծախուած զիները և արժողութիւնը :

Այս տեղեկութիւններէ վերջը կը փութանք սա ևս իմացընելու Արդոյ հասարակութեան, թէ ԳԵՐՈՒՄ ՀԵՅԵՍՈՒՍԻՒՆ բնաւ շահ ընելու դիտաւորութիւն չունի, ինչպէս նաև միաս ալ կը բել չփափաքիր . իր շարժառիթն է Աղդասիրութեան ողին, և այն պիտի ըլլայ մինչև իւր վեր չին չունը :

Աղաւելով իւր Արդոյ ընթերցողները՝ որ իրեն արդասաւորութեան և ծաղկակէտ ըլլալուն օժանդակեն,

Մայ միշտ

Անձնանուէր Աղջին

ԳԵՐՈՒՄ ՀԵՅԵՍՈՒՍԻ :

ԶԻՒՆԻ, 5 ԽԵՐԱԿԱ 1862

Բ Ա Բ Ա Ց Ա Կ Ա Ն

Կրթութեան եւ գիտութեան թեւերն են ընթերցագրութիւն եւ ուսումնասիրութիւն .

Կրթութեամբ և դիտութեամբ մարդիկ իրենց զաղանցին բնութիւնը և չար ու վատ կրքերը մէկ գի ձգելով՝ քաղցր ու բարի բնաւորութիւն մը կը զգենուն : Խակ կրթութիւնն ու դիտութիւնը ընթերցագրութեան և ուսումնասիրութեան ձեռօք կը տարածուին մարդութեան մէջ :

Խնչպէս կարելի է մարդու մը բարեկիրժ ըլլալ, զիտուն երկիլ, եթէ ընթերցագրութիւն չունենայ, եթէ ուսման ճաշակը զոնէ քիչ մը առած չըլլայ, և եթէ յաճախ կրթական և ուսումնական դրուածներ չընթեռու :

Վզգի մը ընթերցագրութեամբ կը ծագի իւր յառաջադիմութիւնը, կրթութիւնը և լուսաւորութիւնը :

Ուսմամբ և կրթութեամբ օգտակար տեղեկութիւններ կունենայ մարդ . անոնցմով երկնային մարմիններուն մեր հողագունտին հետա ունեցած յարաբութիւնները կը սովորինք, կը դիտնանք նաև թէ ինչ են և ուսկից կը պատճառին հովք, անձը բերը, ձիւնը, կարկուտը, տեսակ բնական երեսյթները, ինչ է արեգական և լուսնոյ խաւարմանց պատճառը, ինչպէս և որչափ միջոցի մէջ կը կատարուին իրենց ամենօրեայ և միամեայ շրջանները, ինչ ազգեցութիւն ունին երկրիս վրայ, ինչո՞ւ երբեմն երկար և երբեմն կարծ օրեր կունենանք, եղանակաց փոփոխութեան պատճառը ուսկից է, և ինչո՞ւ օդը երբեմն տաք և երբեմն ցուրտ կը լլայ :

Այսանապէս ընթերցանութեամբ այլ և այլ հարկաւոր դիտութեանց վրայ ծանօթութիւններ կունենանք : Աշխարհագրական դիտութեան միջնորդութեամբ հեռաւոր քաղաքաց կլիման, դիրքը, մեծութիւնը, ունեցած բերքերը, բնակչաց թիւն ու անոնց ինչ բարքի տէր ըլլալը, և այլն կը սովորինք : Վնդղանուր ազգաց պատմութեամբ՝ անցած զացած մարդերու վրայ տեղեկութիւն և անոնց վարուց և կենաց ընթացքին պատմութիւնը կարդալով խելք, և փորձառութիւն կունենանք, որոնցմէ զուրկ կը լլայ տղէտ մէկը :

Ուսմամբ և ընթերցանութեամբ ազգու և գեղեցիկ ձև մի կառնու մը խօսակցութիւնը, անոնցմով ընկերութեան մէջ վայելուչ մարդալարութեամբ վարուիլ կուսանինք, տիրոջը վայլած պա-

տիւը ծառային ընելով և ուրիշ անքաղաքավալաբութիւններ զործելով կոպիտ անուան չենք արժանանար :

Ինթերցմամբ և ուսմամբ չեմ որ մտաց լուսաւորութիւն, դատողսւթեանց և դաղափարաց ձըշգութիւն կունենանք, ծիծաղելի աւելորդապաշտութեանց, անխաղաշարումներու, և անհիմ զուշակութեանց և կախարգութեանց գերի չենք ըլլար :

Դարձեալ կրթութեամբ, որ ընթերցանութեամբ կը ծագի, մարդս մաքրասէր կըլայ, և իւր արտաքին տեսքը սիրուն ու հաճելի ընելու կաշխատի, մաքրասիրութիւնը՝ մտաց մաքրութիւն կուտայ, և աղնիւ խորհուրդներ և զգացումներ կազդէ մարդուս:

Անուսումն կամ տղէտ մէ կը ուսումնական ընկերութեան մէջ ողորմելի լուսութիւն մի սահել պէտք է, եթէ չուզեր որ իւր վրայ խնդան ունկընզիրք, որովհետեւ աշխարհապրութեան վրայ խօսք եղած ատեն, Հայաստանը՝ Փոանսայի արևմտեան գին կը դնէ, Անի քաղաքը՝ Խւրոպայի մէջ Միջերկական ծովաւն եղերքը կը տանի, Առասոն՝ Այեաւ ծովուն վրայ շինուած է կըսէ, Արևման Ամբիղա կը խրկէ և Առշինկթոն՝ Ամբիղայի Միջեցեալ՝ Լահանգաց մայրաքաղաքը՝ Ափեկէի մէջ կը փնտոէ :

Եթէ խօսակցութեան թելը հին պատմութեան վրայ գտնայ, Հայկայ՝ Բէլ բոնաւորին հետ ըրած պատերազմը՝ Առուսէսի քարոզութենէ ետքը կը դնէ, Արամ և Կոստանդիանոս, Հոմերոս, Պըզատոն և Դաւիթ Անյաղթ իրարու ժամանակակից կարծէ, Վարդանեան քաջերուն ըրած պատերազմը՝ Տրովադայի կործանումն հինդ վեցը տարի յառաջ կը դնէ, Լէնկ-Ծախուր՝ Աղեքսանդր Արկեդոնացիէն յառաջ էր կըսէ :

Անթերցափրութեամբ կարող է մարդայս սըխանները ուղղել և ծաղրելի ըլլալ:

Դժբաղգաբար մեր Ազգին մէջ պէտք եղածին շափ ընթերցափրութիւն և ուսումնասիրութիւն չկայ, մանաւանդ Խւրոպային հեռու դանուած դաւառներու և բուն Հայաստանի շատ քաղաքաց մէջ:

Այն քաղաքաց Հայերը՝ որոնք քիչ շատ ուսումնասէր են, անոնք մեծ և նուիրական սպարտաւորութիւն ունին՝ ուսաման և գիտութեան ճաշակը տալ այն տղէտ աղղայնոց՝ որոնք ոչ կընան կարդալ, և ոչ ալ իմանալ Հայերէն լեզուն, իրենց մայրենի բարբառը, թշուառ վիճակ: Ազգային Այսմանագրութեան շնորհիւ միայն կարելի է Հայուն այս վիճակէն աղասիլ . . . :

Ճշմարիտ ազգ ասէրն և ուսումնասէրը պարտաւոր են միութեամբ և մի հոգով ազգային յառա-

ջադիմութեան համար աշխատիլ, և աշխատողներն ալ քաջալերել բանիւ և գործքով, աղջոդուտ ընկերութիւններու և պարբերական հանդէններու միջոցաւ ընդհանուր Ազգին մէջ կրթութեան և դիտութեան սէր տարածել և ապազայ սերունդին լուսաւորութեան սպատակա ըլլալ:

Ազգասէրք, ուսումնասէրներու հետ, միշտ չանքը ձեռքեք պէտք չեն թողուլ, երկուքին կողմանէ ալ յոյս, յոյս և զարձեալ յոյս:

ՅՈՅՍՈՒ ԵՒ ԶԵԿՒՐ

Ասոնք պէտք է որ ըլլան Ճշմարիտ աղջասիրաց գրօշակին վրայի գրուածքը՝ ասոնցմով միայն կարելի է Ազգին բարոյական և մասուրական յառաջադիմութեանը փափառզաց բաղձանքին կատարուիլ: Ճատատառուն յոյս ունեցողներու ջանքը անպըտուղ չմնար, այն յոյսով ամեն գժուարութեանց և խոչնդուններու կը յաղթեն, և փոխանակ վատօրէն անհոգ ութեան և թուլութեան մէջ իյնալու՝ աշխատանքին կրկնապատկել պէտք են միշտ, որպէս զի իրենց ջանից քաղցր պտուղը վայելին յեասոյ:

Ազգային անհոգութենէն մեծ միասներ յառաջ եկած են և կուգան. ոչ ընթերցասիրութիւն, հետեւաբար ոչ կրթութեան սէր և ոչ ալ դիտութեան փափաք կունենայ անհոգութեան անդունքին մէջ թաւալող աղդ մի:

Ամեն աղջային անհատ պարտք ունի Ազգին յառաջադիմութեանը փոյթ ունենալ, աղջային ընդհանուր օղուտը ամեն բանէ վեր բռնել, ամեն օգուաներէ բարձր գասել: Կախնի մէկ քանի աղդեր, ինչպէս Հոռվայեցիք, Սպարտացիք և այլն, այնչափ վառուած էին աղջասիրութեան և Հայրենասիրութեան հուրուլ, որոնք իրենց Հայրենեաց վառնաս, և Ազգին անարդ ութիւն չդալու և օտարաց աղջեկ չիյնալու համար ոչ եղբայր կը նայեին և ոչ զաւակ. Բարուասո Հոռվայեցիին աղջասիրութիւնը մտքերնիս բերենք, որն որ Հայրենաց աղջայը օղտին համար՝ իւր երկու զաւակները ըսպաննեց (1). թող օրինակ ըլլան Վարդանեան Հայրենասէրները՝ արդի Հայոց, անոնք ազգին և Հայրենեաց սիրոյն համար մահը աչք առին:

Կրթութիւնն ու լուսաւորութիւնը (որոնցմէ և Հայրենասիրութիւն) ինչպէս ըսինք, ընթերցասիրութենէ կը բղնին, իսկ ընթերցասիրութիւնը՝ զրբերու և բարոյական, բնական, բանասիրական դիտելեաց վրայ խօսող հրապարակական թերթերու

(1) Հայրենեաց և Ազգին օգտին և աղջասիրութեան համար զեկեր ընել պէտք ենք, այս բայց առանց խոհեմութիւնը ձեռքեք ձգելու:

ծաւալմանէն կախում ունի . աշխատինք ուրեմն ա-
սոնց ծաւալմանը համար :

Գ. Պ.

Բ Ն Ա Կ Ա Ն



ԲԱՑԱՐԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Բ Ա Ժ Ո Ժ Շ Ա Ր Ո Ր Օ Չ

Այս սողունը Ամերիկայի մէջ կը դանուի : Աւելի տաք և խոնաւ երկիրներ և առատ բոյսեր և տունկեր եղող արեագարձներու տակ է ասոր բնակութիւնը : Եթէ իւր բնական աղդումը՝ իրեն վնասակար և սարսափելի միջոցները դործածել տար, այն ժամանակ իւր բնակած երկիրներուն այնպիսի պատիճ մը կը լար, որոյ մէջի բնակիչները կըստիպուէին իրենց տեղերը թողուլ և փախչել, որովհետեւ իւր թոյնը՝ ուրիշ բոլոր օձերու ունեցած թոյներէն սոսկալի և ազգուէ՝, և կլիման որչափ տաք ըլլայ ; այնչափ այս օձը վտանգաւոր կը լայ : Բայց բարեբաղդաբար իւր զօրութիւնը միայն ինքզինքը պաշտպանելու համար կը դործածէ . զրեթէ երբէք մարդու վրայ չարձակիր, եթէ զինքը զգրդուն . ընդհակառակը անոր ներկայութենէն կը փախչի, նաև այն ժամանակ՝ երբ վախնալու բան չկայ :

Այս թաւասոր օձերը կը դանաղանին միւս տեսակներէն իրենց ծնոտի ոսկրներուն և թունալից կարթերուն (crochets) զարմանալի կազմուածքովը : Երկայն և դիւրաշարժ ոսկրեղէն կոթ մը՝ վերին ծնոտին ոսկրները հաստատուն կը բռնէ, որոնց վրայ կը դանուի երկայն, սուր, ճանկի նըման և խողովակածե ակրայ մը, որն որ աչաց վարի դին եղած խաղամունքի (էլեկտր) մը վրայ դըրուածէ : Այս խաղամունքին մէջ պահուածէ թունասոր գեղին հիւթ մը : Երբոր կենդանին կամք չունենայ իր թոյնովը վնասել, սոյն այս ակռան իւր լինդին մէկ ծալքին մէջ կը պահէ : Այս օձերուն դլուխը եռանկիւնի և կողմանի լայնէ, որովհետեւ կարթերը շատ տեղ կը բռնէն : Այս տեսակ օձերուն լեզուն շատ երկայն կը լայ, և կուկորդը շատ կը տարածուի : Ծառնաւոր կարթերը վերին ծամելեաց վրայ հաստատուած են :

Ատենով կարծիք մը կայ եղեր թէ օձերը՝ իրենց որսը հմայելու և կամ զանի վախով թմբ-

րեցընելու կարողութիւնն ունին : Երկելի մատենագիրներէ շատերը այս կախարդութեան իրաւ ըլլալու կընդունին, և այս տեսակ օձերուն՝ դէպ ՚ի իրենց որսերը արձակած ապականեալ շրւնչէն յառաջ կու զայ կը տեսն . բայց Ճշմարտալէս հաստատուած չէ այս : Այսամբ ընդհանուր եղած այս կարծիքը՝ նոյն օձերուն պատճառած երկիրդէն յառաջ եկած կերեկի . որովհետեւ անասունները, ինչպէս նաև մարդիկ, ընդունակ են անմիջապէս երկիրդ մը զդալու՝ երբոր յանկարծ այս սողուններէն տեսնելու ըլլան : Ուրեմն ըսկէ լմնցընել պէտք է որ միայն երկիրդն է սաղդ պատճառ այս բաժուժաւոր օձին կարծեցեալ հմայիչ զօրութեան :

Իսուժաւոր օձ ըսուելուն պատճառն է իր ատունին (պոչ) ծայրը բաւական նշանաւոր զործարան մը ունենալու, այս զործարանը կը բաղկանայ կրնաձն, շարժուն և իրարու կցուած օզակինքէ, որոնք իրենց տարեկան մորթափոխութենէն յառաջ կու զան՝ չոր մազաղաթի նման ճարճատիւն թաղանթի փոխուելով, որուն շառաչիւնը իրենց մերձ ըլլալու կը յայանէ : Երբեմն տառնին վրայ քառասուն և մինչև անդամ յիսուն օղակ ունեցող օձեր աեսնուած է :

Կըսեն թէ բաժուժաւոր օձերը խորամանկ կը լան, բայց իրենց ուղեղը շատ փոքր ըլլալուն համար, պէտք չէ զանոնք շատ խելացի կարծել : Իրենց ամենակատարեալ զդայարանքներն են, լսելիքը և մանաւանդ տեսնենքը : Օձերու բարքն ու բնութիւնը բաւական քաղցր են : Անդամներէ զուրկ ըլլալուն, չեն կընար շուտով մը մէկ տեղէ ուրիշ տեղ անցնիլ, այսու ամենայնիւ բաւական հեռու կը նետուին : Այս զործողութիւնը ընելու համար իրենք իրենց վրայ կը թաւալին, կը զալարուին, զլուխնին զեանէն վեր բարձրացուցած ինքզինքնին բոլոր իրենց գնդերներուն զօրաւոր և փութանակի կարկանդութեամբը ձգտալարի (ressort) նման թող տալով՝ կը նետուին :

Այս սողունները իրենցինք երեք անգամ մէծ կենդանիները կը լլելու կարողութիւնը ունին : որովհետեւ իրենց որկարը (պրադի ծակի) շատ գիւրաւ կը բացուի ու կընդարձակուի : Հնդկասանի մէծ օձերը՝ այծեր, եղջերուներ և այլն անդամ կը ընան կը լլել : Հներանի առաստաղին (թալան) շատ կամքիչ շարժուն ոսկրներէն զատ, ետև ծոռւած փոքր ակռաներով ևս զինեալ են, որոնք որսը բռնելու կը զործածուին, ինչու որ ծանելու բնաւ չեն զարանոնք :

Հնդկիները առանց վտանգի այս օձերը կը կրթեն, կընտանեցնեն և կը թմբրեցնեն կամ այս-

պէս ըսենք, կը հմայեն: Տեսակ մը նուազաւոր պարի և դաշնակաւոր երգի կը վարժեցընեն զանոնք: Պ. աը Շամթուղբիան կը պատէ թէ, 1791 ին, վերին Քանաստայի մէջ, Ավանեսէ զետին եղերացը վրայ զանուելով՝ տեղացի մը աեսերէ, որ բարակ զաւազանի հարուածով մի բուժաւոր օձի մը բարկութիւնը իջեցնելէ ետք՝ իւր սրինդը ջալելով զայն իւր ետեւն ջըչեցուցերէ: Ազսեն թէ հիմակ Հնդիկի կախարդները (jongleurs) այս սողուններուն կրթութիւն տալէ յառաջ՝ անոնց թունալից կարթերը կը հանեն: Այս կամթերը քանի մը ամիսէ կը նորող ին ու կրնան նորէն մահպատճառէլ:

Թարգի է Փրանս,
Գ. Պ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ



ՀԵՏՄ-ՔՐՅԱԾԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆԵՐ

Բաժանաւոն չեցուաց. Ասիոյ մէջ՝ 143 այլ և այլ զաւառական լեզուներ կը համրուին. Եւրոպիոյ մէջ՝ 53. Ափրիկէի մէջ՝ 115. Ովկիանիոյ և Ամերիկայի մէջ՝ 422:

Օրագիրք եւ էրագիրք. 1848 ին Անկլիացի մը այն ժամանակ երկրագունտիս զանազան երկիրներուն մէջ հրատարակուած օրագրութեանց թիւը մի ըստ միուջէ հաջուեր և զաեր է այսպէս, Ափրիկէի մէջ՝ 6 օրագիր, Աւստրալիա՝ 34, Աւստրիա՝ 36, Պերճիզա՝ 75, Քանատա՝ 51, Տանիմարգա՝ 54, Անկլիա՝ 375, Ֆրանսա՝ 489, Յունաստան՝ 9, Հանովեր՝ 4, Իռլանդա՝ 80, Շուետ և Պոր-Վեկիա՝ 70, Լեհաստան՝ 49, Փարթուկալ՝ 20, Բրուսիա՝ 168, Ուուսիա՝ 154, Ալգուսիա՝ 77, Ալպանիա՝ 77, Օոււիցերի՝ 51, Ամերիկայի Արացեալ—Կահանգաց մէջ՝ 800 (1):

Բացասանուածութիւն. Հնդկաց դիցարանութիւնը 360 միլիոնի չափ աստուածներ կը ճանչէ:

Մարդոցն չեց. Միջին սահման. Երիկ մարդուն ուղեղը 3 լիտր ու կէս կը կըռէ. կնոջ ուղեղը 2 լիտր և երկու երթորդ:

Տղայութեան ժամանակ՝ մարդուս երակը վայր-

(1) Պէրսիչեալ Վակլավին թուրքից օրագիրները կամ հաշուած չէ. և կամ հաշուելու ելած ասեն (1848) օրագրի երես տեսած չէ.

կենի մը մէջ՝ 180 թնդիւն ունի, երիտասարդութեան մէջ՝ 80, առնական հասակին վերջը՝ 60:

Մարդկային արեան միջին ջերմութիւնը 92 աստիճան է. ոչխարինը՝ 102, աղուեսինը՝ 107:

Քառասուն և երկու մարդերու արիւնը՝ կարող է 24 լիտրոց արօրի խոփ (առիւն ակմից) մը դարձնելու բաւական երկաթ մատակարարել:

Ճարտարաբանեան չեց. 1 սնառնի մէջ տարուէ տարի լուսաւորութեան համար եղած ծախսը 546000 լիրա սթերլինի կը հասնի (որ ըսելէ 13,650,000 ֆրանք): Անկլիայ ուրիշ քաղաքաց և զիւղաքաղաքաներու մէջ սպառուած ստակը՝ 5,400,000 լիրա ըսթերլինի (այսինքն 165 միլիոն ֆրանք):

Երեծն Բրիտանիոյ երկրէն ամեն տարի 31, 500,000 տակառ երկրագուխ կ'ելլէ, Պերճիզայէն՝ 4,960,000. Ֆրանսայէն՝ 5,900,000, Արագեալ—Կահանգաներէն՝ 4,800,000, Բրուսիայէն՝ 3,500,000. Աւստրիայէն՝ 800,000:

Սունդ. Հետազայ պատկերը, որ բնալցաներու նոր գիտողութիւններով ու քննութիւններով վաեւրացած է, առջենիս կը գնէ մեր սովորական կերտկուրներուն (aliment) մէջ սպառուակած սննդարար մասերուն հաշերը:

100 Լիտր սպիտակ 1 ուրիխան՝ իւր մէջը սննդարար մաս կը պարունակէ	93 լիտր
" " Շերմակ հացը՝	80 "
" " Մսավաճառի միսը՝	35 "
" " Խաղողը՝	27 "
" " Ծիրանը՝ (ղայլսի)	26 "
" " Գետանախնձորը՝	25 "
" " Դեղձը՝ (չէֆթալի)	25 "
" " Խնձորը՝	17 "
" " Տանձը՝	16 "
" " Աւելղղինը՝ (հաւուճ)	14 "
" " Ելակը՝ (չելէք)	13 "
" " Կաղամբը՝ (լահանա)	8 "
" " Սեղը՝ (զավուն)	3 "

Անունց չեց. Փիղը 2-3 հարիւր և երեմն 4 հարիւր տարույց չափ կազրի:

Հաշեւ ընելով զամած են թէ վայրենի աղուեսու ժամու մը մէջ՝ 30 մղոն աեղ կրնայ երթալ: Ծիծառին թուիը աւելի շուտ է. ճանճերը՝ ժամու մի մէջ՝ 60 մղոն աեղ թռչելու արագ ութիւնը կը ցոցընեն:

Արգատաւորութիւն միջաներու եւ ճկերու. Մեղուներու թագուչի մը կրնայ երկու ամսուան միջիցի մէջ, իւրաքանչիւր օր, 200 ական կիթ ածելու երեք օրուան մէջ՝ կ'ելլեն:

Մեր տուները յաջախող ճանճելուն տեսակէն առաջանձին հաստ մը , եղանակի մը մէջ 20 միլետոն ձռ կ'ածէ : Պիծակներու (Եղանակ արշու) բայնին մէջ հասարակօրէն 15—16 հազար քչիջ (Քշուի բնակարան) կը դատուի :

Իւրաքանչիւր լիտր որդան կարմիրը (Գլուշը) իւր մէջ 70 հազար խաշած միջատ կը պարունակէ , Եւրոպիոյ մէջ ամեն տարի 6—7 հարիւր հազար լիտր որդան կարմիր կը մանէ :

Օրածանը (առաջանակ) և բերլ լսուած անուշ ջըրի ձռւկը , 50 հազարէն ինչուան 200 հազար ձռ կածեն . Ծինկա ձռւկը 20 հազարէն ինչուան 30000. Ծիւնիկը (իսկություն) 400 հազարէն ինչուան 500,000. Չողաձուկը (պահածալ դուլցը) 2 միլիոնէն ինչուան 3 միլիոն : Կարմրամին ձռւկը (առաջանական պահածություն) տարուան մի մէջ , 8 կամ 10 միլիոն կիլո կածէ :

Բառաց եւ տնկոց վրայ . Կը կարծուի թէ երկրիս վրայ 100,000 զանազան տեսակ բոյս և տունկ կը գտնուի , և 400,000 տարբէր տեսակ միջատներ : Օրովային աշխարհը աւելի հարուստ է այս կողմանէ : Պողիպագներու (ընդունիութ) թիւր աւելի շատ է՝ միջատները թուէն , իսկ ջրածին որդերը անհամար են :

Անկլիա , Խոեքսի կոմսութեան մէջ կաղնի (Քէլ) մը կայ , որ շատ գարեր անցուցած կ'երեւի , տեղացիք ֆերլը կը կոչեն զայն : Վասր բունին ջրջապատը 36 օտք է . իւր ցողունէն (պէտին) տասներկու սոսեր ելած են , որոնց ստուերը 800 տասներկու սոսեր ելած են , որոնց ստուերը 800 տասք ջրջապատ տեղ կը տարածի : Բաւական ժամանակ այս տեղ հռչակաւոր տօնավաճառ մի կը կատարուէր , ամեն տարի յուլիսի երկուքին : Վասն խանութ այս վեճիսարի ծառին տուած ստուերին ջրջապատին մէջ կը շնուռէր :

Հնդիկ ընկուղե (հինդիստան ճեկուլ) ծառը հնդիկներուն հաց , ջուր , զինի , քայլախ , օղի , կաթ , իւղ , մեղք , և շաքար կը մատակարարէ : Վասն ծառին սոսերէն , տերեներէն , և երակներէն (Տանը թելէրէն) , հերիւն (պին) , թէլ , զդեստ , աման , կողով , թուղթ , նաւու կայմ , արագաստ , և պարաներ (հալլի) կը շնուռին :

Թագիտ . — Պ . Պ .

կորով մարդիկ , ասոնցմէ ոմանք հարուստ էին և տեղացի , ոմանք ալ աղքատ և թափառական : Եթէ Ռուսիոյ անկեղծ և ծերունի ժամանակադիր կ'իս կ'աստորին հաւատանք , այս ժողովուրդներէն մէկ քանին , ինչպէս Տրեվլեանք . “ Անտառներու մէջ կը ըրջէին եղջերուներու պէս , և նորահաս աղջիկներ կը յափշտակէին՝ անոնց աղքիւր դայած ժամանակը ” :

Տայց Ալաւեանք , որ ասոնցմէ աւելի կրթեալ էին , Իւմէնի գեղեցիկ լճին եղերացը վրայ՝ լայն գետի մը քով՝ մեծ քաղաք մի շնուած էին , և զայն ԱՌՎՈՒԿՈՐՈՏ , նոր առաջ կը կոչէին : Վանքան հզօր էր այս քաղաքը , որ այն երկրին մէջ առակ եղած էր այս թէ “ Ովկ կարող է Վատուծոյ և մեծ Սովորոսին գէմ դնել ” :

Քիչ մի ետք քաղաքին մէջ զժուութիւնը և հակառակութիւնը սկսու , և “ որովհեակ ընտանիք ընտանեաց հետ կը կռուէին ” , կըսէ Վասոր , Կոսթոմիլ անուն մեծարոյ քաղաքայի մը , Հասարակութեան առջև հրապարակ ելնելով օր մի աղաղակեց , “ խաղաղութիւնը հեռացաւ բոլորովին մեր մէջէն , քաղաքէն գուրս հզօր և արգար մարդ մի փնառեակ զմեղ կառավարելու համար ” : Շասմը ընդունելի եղաւ , որով զային երեք բաղդախուն դիր երիտասարդ զլսարքիցին իւրենց գիտաւորութիւնը , որոնք այն տեղ մերձակայ տեղուանքը նաւէ մի գեռ նոր ցամաք ելած էին :

Վասնք երեք եղբարք էին , Ծիւրիք . Աինեսս և Խզոր անուամբ , Արբէկներու (1) զնդի մը կիշնէրին : Ծիւրիք և իւր եղբարքը իրենց դունդովը Ոսու անուամբ մերձակայ երկրէ մի , հաւանականաբար Աթոքհոլմէն կուզային , և Ոսոսի կամ Ոսոսացիք կըսուէին : Սովորոսի Ալաւերը՝ Ծիւրիքին զալով՝ ըսին , “ թաղաւորէ մեր վրայ և մեզի օրենքներ տուրէ ” :

Ծիւրիք ընդունեցաւ իրեն եղած առաջարկութիւնը և անոնց աղաջելուն ըսպասեց : Վասնիս լճին եղերբը գեղեցիկ բերդ մի շնել տուաւ , որ մինչեւ ցայսօր կը տեսնուի ; իւր եղբայրներն ալ մէյմէ հաս շնեցին , և բաւական տեղեր ալ ասնելով՝ իւրենց ընկերներուն տուին , որոնք ՊՈՅԵՐ (աղնուական) ըսուեցան : Սովորոսի բնակիչները՝ աեսնելով որ այս նորեկները զիրենք յաղթուածի տեղ գնելով՝ կը նեղեն , անմիջապես ընդ առաջնորդութեամբ Քաջն - Ատիմ անուն

ԱՐԴԱՐ ԵՐԱԲԻ ՍՏՈՒԳԱՅԵՑԵՐԻԹԻՅ :

Իններորդ դարուն մէջ , Ոսուիան ճախճախուա դաշտ մի էր , որուն մէջ կը բնակէին քաջա-

(1) Վարեկները , Նորմանուացիք էին , որոնք հիմնացին և արևմտեան ծովերուն վրայ առավատակութիւններ կ'ընեին .

մէկուն , որ իրենց մէջէն ընտրած էին , զէնք առնելով սպառաղինեցան . Էբայց Ռիւրիք զանոնք զարկաւ , ցրուեց և Վատիմը իւր ձեռօքը սպան նելէ եաք՝ նորէն քաղաքը իւր լուծին տակ տուաւ : Յետոյ քանի մը մերձակայ քաղաքներու ալ տիրեց , զօրացաւ և ծովաչէններու (չէթէճի) այս փոքր պէտէն ծաղեցաւ արդի աշխարհին ընդարձակագոյն կայսրութիւնը :

Գ. Պ

Ա. Յ

Գարուն Հայաստանին կը խոստանայ իւր ընթերցողաց , որ հետ զշետէ առջի թերթով ուսումնական և հետաքրքրական հարցութեան պիտի ընէ և յաջորդ թուով անոր պատամանին պիտի տայ :

Հ Յ Յ Ա Ս Ա Կ

Ա. Ճշմարիտ մէջ մարդ ովէ :

Մ Ա Խ Ի Գ Ի Տ Ե Լ Ի Ք Ե Ւ Զ Ա Խ Ի Բ Ա Խ Ա Խ Ի Ք

ՆԵՐԱՌԱ ԳԵՏ . — Քանի մը զետեր կան որոնք ամեն տարի որոշեալ ժամանակին առատանալով՝ իրենց ափունքին մերձ եղած դաշտերը կողողեն : Անհաւանդ Վեղան՝ այս սրանչելիքով երեկի եղած է հին տանենէ ՚ի վեր : Հիները ասոր բուն պատճառը չէին դիտեր , որովհետեւ ծանօթօրինակներ չկային այն ժամանակ :

Եյսօրուան օր , ամեն մարդ զիտէ թէ այս երեսյթը՝ արեւադաներու տակ զանուած զետերուն հասարակ է , և որածճառը՝ այն շրջանաւոր (périodique) անձրեներն են՝ որոնք այրեցած զօտույն մէջ կը լաւան , ամառնային արեւակայքն ետքը .

Վաղերաց և զետերուն ջրերը՝ սաստիկ ու անսալով այս անձրեներէն , զետին փոսը կը լնուն , և իսկոյն ափանց սահմաններէն դուրս կը հսկին : Այս ջրերը իրենց հետ կը բերեն նաև շատ մը բաւարար կաւեր , որոնք միակ պատճառն նոյն կողմերուն բերի և սպարար ըլլալուն : Եդիպոս՝ ուր տեղ բնաւ չանձրեն , տառնց կը պարտառի իւր զարմանալի պաղաքերութիւնը :

ՄԵՌԵՎՈՒՄ ՄՐ. ԳԼՈՒԽՈ . — Աւաղերեց մը զերեղմանի մօտ դրուած ննջեցեալի մը թաղման պաշտօնը կը կատարէր . այն տեղ նոյն զերեղմանին մէջ թաղուած ուրիշ ննջեցեալներու սկրները զետինը ասդիս անդին սփոռուած էին :

Իոլոր ներկայ եղողները աւագ երեցին կատարած պաշտօնը և ըրած աղջթքները մտիկ կը նէլին և մեծաւ ուշադրութեամբ աշուրնին դէպ ՚ի զերեղմանին քովին . Հողերուն անկած՝ անտայ վրայի սկրները և զանկերը կը գիտէին : Յանկարծ բաղմութեան մէջէն սարապիով խառնուած զարհութելի ձայն մի լսուեցաւ որ կաղաղակէր . “Ո՛Հ Աւտուած , այս ինչ հրացք է , ի՞նչպէս կարելի է որ մեռած մարդուն դանկը շարժի ”: Այս երեսութիս վրայ այն տեղ գտնուողները ապշած մնացին և ահը պաշարեց զիրենք , ամենուն աչքերը նոյն առարկային վրայ դարձան , ամեն մարդ սարսափած և շփոթած իրարու երես կը նայէր : ’Ի վերայ այսը ամենայնի մեռեալին զլուխը երթալով աւելի կը շարժէր , և կարծես թէ իւր հանդսութիւնը աւրող յանդուղն մարդոց սպառնալիք կը նէր : Աւելի կը յառաջանայ , իրեն եղած նախատանաց հաշիւ պահանջելու համար : Իոլոր բաղմաւթիւնը երկիւղեն շփոթած ինչ ընկելը չդիտեր , ումանք սաստիկ աղաղակներ ձկելով՝ կը փախչին ; և ամանք ծնկան վրայ գալով՝ Աստուածային ողորմութիւնը կը խնդրեն իրենց և մեռեալին համար , որուն զլուխը յառաջանալով՝ կը յառաջանար : Այս ժամանակ քահանան երեսը խաչկնքելով՝ կաղաղակէ , “Յանուն Աստուածոյ կենդանույ , կը հրամայեն զբեղ դպւիս , որ եղած տեղի անշարժ մնա ”: Գլուխը կը հնազանդի և իսկոյն ետ կը դառնայ : Անձ մուկ մը մէջէն կելնէ և քահանային ձայնեն զարհութեած : փախչելով մօտակայ ծակ մը կը մտնէ :

Ա Յ Յ Ա Ս Ա Կ Ե Ր Ա Ծ Ա Կ

Ժամանակին . կորուստը անդարմանելի է :

“Երկայէն ուրիշ բան չունինք , անցեալը ոչ չինչ է , ապագան ալ անյայտ :

Աշխարհիս բոլոր ոսկիովը բոսկէ մը անդամ ձեռք չպերտիր :

Ե Թ Ե Ւ Տ Տ Ր Ա Կ Ե ՞

Օ Ֆ - Ն Ի մ 5 Փետրվար 1862 :

Յունիար 16 ին Մարսիլիա մեկնող Յալեթ
Օլիստ շողենաւուն մէջ դրուած ապրանքները .

Բուրդ	պալեայ	227
Խաշխաշի հունա	տոպրակ	130
Շուշմայ (առ-առձ)	"	140
Ճէշրի	"	27
Խէժ	"	10
Բամպակ	"	15

Եպյն օրը Մարսիլիա մեկնող Ենաֆ-ս անուն
Գաղղը շողենաւուն մէջ դրուած ապրանքները .

Բամպակ	պալեայ	416
Խաշխաշի հունա	տոպրակ	335
Մազ այծեայ (Եկլ Բէյբ-)	պալեայ	3
Խէժ (զամբարապի)	սնտուկ	19
Մատուտակի փայտ (Թան չեօքի-)	պալեայ	10
Թառթ (Տահմանչյի)	սնտուկ	1
Մետաքս	պալեայ	3
Բուրդ (Երբալլ)	"	36
Չափիչ	տոպրակ	10
Տղբուկ (Ք-լի-ս)	տակառ	3
Այծեամի բուրդ	պալեայ	4

Յունիար 20 ին Լիվրուն մեկնող Երգադիս
անուն Ենդղ. շողենաւուն մէջի ապրանքները .

Տորոն (չեօք պօյա)	պալեայ	1290
Բամպակ	"	214
Խէժ	սնտուկ	35
Եփիոն	"	26
Ճէշրի	տոպրակ	34
Ճերմակ քար	թօնէ լաթօ	45
Եղիպացորեն	քիլէ	2000

Լօնտրայի համար

Եփիոն	սնտուկ	11
-------	--------	----

Բօթէրտամի համար

Գլատոր (Տաղլ)	տոպրակ	10
---------------	--------	----

Եղր Եօրքի համար

Եփիոն	սնտուկ	91
-------	--------	----

Պասթանի համար

Եփիոն	սնտուկ	14
Կայսեր օրը թարիէսթ մեկնող Ենալլ անուն Եւստ շողենաւուն մէջի ապրանքները .		

Բամպակ	պալեայ	168
Մորթ	"	14
Թիֆթիք	"	5
Կապաստակի մորթ	"	3
Սպունդ (Ենալլ)	տոպրակ	26
Գլատոր (Տաղլ)	"	3
Ճէշրի	"	6
Մեղրամամ	"	5
Թարթ	"	21
Եփիոն	"	1
Տղբուկ	տակառ	4

Վենեակոյ համար

Բամպակ	պալեայ	91
Թիֆթիք	"	21
Վայրի կաղին (Բալանչո-պ)	տոպրակ	100

Եյս շաբթուան շողենաւուց մէջ դրուած
դլսաւոր ապրանաց նաւողջէքը (Նա-լին) .

Տորոն	չէլին թօնէ լաթօն	80
Վայրի կաղին	"	60
Միրդ (Եկա-իլ)	55-80	"
Սպունդ	50	"
Եփիոն	150	"
Խէժ	50	"

Փոխանակաղիք Օմիւռնիոյ

Լոնտրայի վրայ	122 1/2	123 1/4
Մարսիլիայի	192	194
Թարիէսթի	346	348

Տ Վ

ՏԵՐՈՒԵՆ

ԳՐ. Պ. ՊԱՐՏԻԶԱՆԵԱՆ

Զ Մ Ի Ւ Ծ Ե Ւ Ծ

Ի ՏԱՐԱԿԵ ՏԵՏԵԱ